ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մարտի 2025 թվականի N 254 - Ա

ՀՈՂԱՄԱՍԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, ինչպես նաև «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) ամրացված՝ քաղ. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Պ. Սևակի փողոց 1 հասցեում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված 0.8875 հեկտար մակերեսով հողամասից (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N09062023-01-0047) 396.61 քառ. մետր մակերեսով հողամասը (այսուհետ՝ հողամաս)՝ համաձայն սույն որոշման հավելվածի՝ սահմանափակ օգտվելու իրավունքով (գույքային սերվիտուտով) 3 տարի ժամկետով տրամադրել Հայաստանի

Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտության զարգացման հիմնադրամին (այսուհետ՝ հիմնադրամ)՝ քաղ. Երևան, Պ. Սևակի 1/7 հասցեում կառուցված բազմաբնակարան շենքի բնակիչներին որպես մուտք դեպի բազմաբնակարան շենք և ավտոկայանատեղի հողամասով անցնելու և երթևեկելու համար:

2. Կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հիմնադրամի հետ կնքել հողամասից սահմանափակ օգտվելու իրավունքի (գույքային սերվիտուտի) պայմանագիր՝ դրանում սահմանելով, որ՝

ա. պայմանագրի կնքման և պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման հիմնադրամի միջոցների հաշվին,

բ. հիմնադրամը պարտավորվում է հողամասից սահմանափակ օգտվելու իրավունքի (գույքային սերվիտուտի) դիմաց հիմնադրամի միջոցների հաշվին ապահովել հողամասի շահագործումը որպես ճանապարհ և այն մշտապես պահել բարեկարգ,

գ. հողամասով անցնելը և երթևեկելը չի խոչընդոտի «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության անխափան գործունեությանը,

դ. սույն ենթակետի «բ» և «գ» պարբերություններով սահմանված պայմանների խախտման դեպքում հիմնադրամի հողամասից սահմանափակ օգտվելու իրավունքը (գույքային սերվիտուտը) համարվում է դադարեցված և պայմանագիրը ենթակա է խզման.

2) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրի կնքումից 3 տարի հետո ներկայացնել առաջարկություն հողամասի հետագա տնօրինման վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ